Լյուդմիլա Գարեգինյան

ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՈՒՏԻՍՏԻԿ ՍՊԵԿՏՈՐԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Երեխայի զարգացումը և կրթությունը շարունակական գործընթաց են, ինչը, սակայն, միանման չի ընթանում տարբեր երեխաների մոտ: Երբեմն անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ աշխատանքներ իրականացնել երեխայի բնականոն զարգացումը խթանելու համար: Հոգեֆիզիկական զարգացման հապաղում ունեցող երեխաների աջակցության գործընթացն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ է իմանալ երեխայի տարիքային զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև բացահայտել նրա անհատական կարողություններն ու հնարավորությունները:

Հատուկ մանկավարժական աշխատանքների հիմնական նպատակն է զարգացնել երեխայի մտավոր, ֆիզիկական, լեզվական և համագործակցային հմտությունները, նպաստել նոր փորձառությունների ձեռքբերմանը, սոցիալիզացմանն ու հարմարեցմանը: Իրականացնելով նշված աշխատանքները՝ հատուկ մանկավարժը խթանում է երեխայի անհատական աճը, օգնում նրան զարգանալ կայուն տեմպերով՝ դրսևորելով իր սեփական կարողությունները: Աշխատանքների պլանավորման և իրականացման հիմքում դրվում է գիտելիքի աստիճանաբար ընդլայնման սկզբունքը՝ օգնելով երեխային կապակցելու նոր գիտելիքը արդեն ձեռք բերածի հետ:

Աուտիստիկ սպեկտորի խանգարումներ

Աուտիստիկ սպեկտորի խանգարումները դրսևորվում են մինչև երեք տարեկանը. փոփոխություններ են նկատվում երեխայի հոգեկանի բոլոր ոլորտներում՝ պահանջմունքային, ճանաչողական, հուզական և վարքային: Այդ փոփոխությունները տարիքային տարբեր փուլերում կարող են արտահայտվել տարբեր հաճախականությամբ և ուժգնությամբ: Երեխաներն ունենում են սոցիալական հարմարվողականության, միջանձնային հարաբերություններ ձևավորելու լուրջ դժվարություններ, իսկ իրենց շրջապատող միջավայրն ընկալում են որակապես այլ ձևով: Նրանք ապրում են «իրենց աշխարհում», որտեղ ամեն ինչ անփոփոխ է և բոլորի համար փակ: Այն ամենը, ինչ գտնվում է այդ աշխարհից դուրս, նրանց մոտ առաջացնում է անհաղթահարելի վախ և մերժում: Այդ աշխարհ թափանցելու ցանկացած փորձ առաջացնում է դիմադրություն երեխայի կողմից [1]:

Աուտիստիկ սպեկտորի խանգարում ունեցող երեխաների վարքագիծը շատ կարծրատիպային է, միօրինակ և դժվար վերահսկվող: Հիմնականում նրանք նախընտրում են խաղալ միայնակ, շատ հաճախ չեն արձագանքում, երբ իրենց կանչում են, ուշադրություն չեն դարձնում շրջապատի մարդկանց վրա, տպավորություն է ստեղծվում, որ նրանց չեն տեսնում կամ լսում: Հնարավոր են ոչ ադեկվատ արձագանքներ՝ ծիծաղ, լաց, վախ, կրկնվող շարժումներ, անընդհատ խոսել առանց դադարի՝ մեկ թեմայի շուրջ: Այս երեխաները դժվարանում են հարմարվել փոփոխություններին, նոր մարդկանց, նոր պայմաններին, ունենում են ուշադրությունը կենտրոնացնելու, պահպանելու և տեղափոխելու լուրջ դժվարություններ [2]:

Հատուկ մանկավարժական աշխատանքներն աուտիստիկ սպեկտորի խանգարում ունեցող երեխայի հետ

Աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող երեխային տրամադրվող հատուկ մանկավարժական ծառայությունները պլանավորվում են՝ հաշվի առնելով վերջինիս զարգացման առանձնահատկությունները, կարողությունները, հմտությունները, հետաքրքրություններն ու նախասիրությունները: Արդյունավետ է, երբ աշխատանքի մեջ ներառվում է երեխայի՝ մեկից ավելի հետաքրքրություններ, քանի որ նրանք արագ հոգնում են նույնատիպ առաջադրանքներից և գործողություններից: Աշխատանքային միջավայր ընտրելիս և կազմակերպելիս հաշվի են առնվում արտաքին գրգռիչների (լույս, ջերմություն, ձայն և այլն) նկատմամբ երեխայի վերաբերմունքը, քանի որ նրանք կարող են անտարբեր կամ հակառակը՝ գերզգայուն լինել որոշ ազդակների նկատմամբ:

Կարևոր է հաշվի առնել այն, որ այս երեխաները դժվար են ընկալում բարդ նախադասություններով ձևակերպված խոսքային հրահանգները: Այդ իսկ պատճառով հրահանգները պետք է ձևակերպել կարճ և հստակ, նպատակահարմար է մի քանի գործողությունից բաղկացած բարդ հրահանգը բաժանել առանձին պարզ հրահանգների, ինչպես նաև՝ կիրառել լրացուցիչ խթանող այնպիսի միջոցներ, ինչպիսիք են ժեստերը, նկար-քարտերը, սիմվոլները և այլն: Այս ամենը թույլ է տալիս ապահովել աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող երեխաների ընկալման ավելի բարձր մակարդակ [1; 3]:

Գրականություն

1. Սարատիկյան Լ., Հարությունյան Մ., Հոգեբանական աջակցություն հոգեֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաներին, Երևան, 2017, էջ 33:
2. Зобова Л.Г., Развитие познавательной активности у детей с расстройствами аутистического спектра. https://infourok.ru/razvitie-poznavatelnoy-aktivnosti-u-detey-s-rasstroystvami-autisticheskogo-spektra-1112784.html
3. Ostafi R., Ten Top Tips for Working with Autistic Children. https://txsource.com/2016/11/21/ten-top-tips-working-autistic-children/